

«Հանդէս Ամսօրեայ»-ի պատուարժան խմբագրութիւն,
Վիեննա,

Երկար ժամանակ է ինչ սկսել եմ հաւաքել իրանի Հայոց պատմութեան
վերաբերող արխիւային նիւթեր, որոնք դասաւորում եմ աստիճանաբար:

Այդ արխիւային նիւթերը գտնաւորելու անձանց կամ հաստատութեանց մօտ
գտնուելով՝, որոշները արտագրել եւ կամ վերցրել եմ բնագրերը, որոնք աս-
տիճանաբար պիտի ուղարկեմ Հայաստանի Արխիւային վարչութեան, մնա-
յուն տեղում պահուելու համար:

Արդ, կ'ուզէի, որ եթէ հնարաւոր է խնդրել հանդէսիդ պատուարժան
խմբագրութիւնից, որ բարի լինէիք տպագրելու արխիւային այս նիւթերը հեր-
բականօրէն «Հին ԹՂԹԵՐ ԻՐԱՆԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» վերնագրի
ներքոյ: Ներփակ ուղարկում եմ իրանի Գեարդաբադ հայաբնակ գիւղի 1901—
1902 ուսումնական տարուայ համար դպրոցի ՏԵՂԵԿԱԳԻՐ-ի արտագրուած
օրինակը՝ գրուած նոյն դպրոցի ուսուցիչ Սարգիս Տէր Մկրտիչեանի կողմից,
1901 թուին: Յոյս ունեմ, որ կ'ընդառաջէի խնդրանքիս, որով հնարաւորութիւն
կը տաք կորուստից փրկելու արխիւային հարուստ այս վաւերագրերը՝ ապա-
գայ պատմագրներին հայրաքայքելով վաւերական աղբիւրներ:

Թաւրիզ

Յարգանօք՝
Էմիլ Յակոբեան

Հին ԹՂԹԵՐ ԻՐԱՆԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ուրմիայի շրջան.—

Ուրմիա քաղաքը եւ համանուն գաւառը գտնուում է արեւմտեան Ատրպա-
տականում (Իրան), Թաւրիզից դէպի հարաւ-արեւմուտք, 293 քիլոմէթր հե-
ռաւորութեան վրայ: Ուրմիա լինելով Ատրպատականի հնագոյն քաղաքներից
մէկը, շատ վաղ ժամանակներից սկսած ունեցել է հայաբնակ գիւղերի մի քա-
նի գիւղախումբ:

Ուրմիա քաղաքի եւ շրջանի գիւղերի բնակչութիւնը բաղկացած է եղել
չիէ թուրքերից, ասորիներից, հայերից եւ մասամբ հրեաներից: Ժամանակին
Ուրմիայի շրջանի հայաբնակ գիւղերի թիւն էր 33, որոնցից որոշները ներ-
կայիս նաեւ հայաբնակ են:

1895-ական թուականներից սկսած, Թաւրիզի Հայուհեաց Բարեգործա-
կան Միացեալ Ընկերութիւնը, Ուրմիայի շրջանի հայ ժողովրդի մէջ գրադի-
տութիւն տարածելու նպատակով, թէ՛ քաղաքում եւ թէ՛ գիւղերում հիմնել է
գլխավորներ, որոնց ուսուցիչները պատրաստած կրթական զեկոյցներից ու աշա-
կերտութեան գրութիւններից մէկ մասը՝ թուով 8 գրութիւն եւ զեկոյց ներ-
կայացնում ենք ստորեւ.—

1 ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա. ԵՌԱՄՍԵԱԿԻ 1901 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԹԱԻՐԻՋԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳԵԱՐԳԱԲԱԴԻ ՄԻԳԱՍԵԱՆ ՆՈՐԱՀԻՄՆ ԴՊՐՈՑԻ

Ա. Գեարդաբադ գիւղը եւ ժողովուրդը.—

Գիւղը որ ունի հարիւրքսան տուն ծուխ, գտնուում է Ուրմիայից 1 1/3 մղոն
հեռաւորութեան վրայ, զուտ հայաբնակ. բնակիչները բացառապէս լուսաւոր-
չական են, ունեն չորս քահանայ, որոնցից Տ. Տ. Յովհաննէս Գասպարեան եւ
Մկրտիչ Տ. Պետրոսեան նորընծաներ են, ձեռնադրուած 1901-ի Յունուարի
15-ին Գեարդ. Տ. Սահակ Եպիսկ. Այվատեանից իսկ տ. տ. Կարապետ եւ Ներսէս
քահանայք աւելի հին: Սրանք վերջիններս, աւելի եւ աւելի մեկուսացած են
եւ ոչ մի հասարակական գործի չեն խառնուում, առաջինը իւր ծերութեան
պատճառով իսկ երկրորդը խելագարութեան: Հասարակական գործերը կա-
տարուում են բացառապէս նորընծաների ձեռքով, որոնք չընայելով այնքան
կրթուած չեն, բայց շատ բարեմիտ եւ օգտակար անձնաւորութիւններ են հայ
հասարակութեան:

Գիւղը կալուածական իրաւունքներով է կառավարուում, նա սեփականու-
թիւնն է Միւրզա Բահիմ Խան Միւր Փէնջի երկու որդի որդուց Մամեդ Ալի
Խան Ալիմ Սալթանի հոգատարութեան ներքոյ, որը գտնուում է Ուրմիա
քաղաքում, իսկ տասնորդը հաւաքուած է վերակացու Ղանի Բակի (Մուբա-
շէր) միջոցով: Տեղը շատ գեղեցիկ է եւ լի ծառատաններով ու որթատան-
ներով ջրառատ է եւ հարթ: Դժբախտաբար այդ բարի եւ առատ երկրում ժո-
ղովուրդը ազա՛հ է եւ ձրիակեր. սոյն հանգամանքը եղել է հետեւանք «Ազգա-
յիններ» անուան տակ շրջող անձանց զիջողաբար վարմունքի ժողովրդի հետ:

Ժողովուրդը ապրում է կիսանահապետական կարգով. առաջ եղել է շատ
եկեղեցասէր, բայց այժմ, շնորհիւ մի քանի անպատկառ ուսուցիչների անու-
սուցչաւայել վարմունքի, խորթ է դէպի այդ սրբավայրը եւ մանաւանդ դէպի
ուսումնարանը, որի գոյութիւնը միայն շորթորդ տարին է՝ որ ըստ երեւոյթին
կանոնաւոր մեթոտիկայով դասաւանդութեան է ենթակայ եղել, ա. տարին
չնորհիւ, իսկ Գ. տարին երկու դասաշրջանում, Նոյեմբերի 10-ից — Մարտի
1-ը պ. Ալէքսանդր Գասպարեանցի, իսկ Մարտ 1-ից — ուսումնական տարուայ
վերջը բարեկրօն Մկրտիչ քահանայ Տ. Պետրոսեանի շնորհիւ: Դժբախտաբար
սորանց պաշտօնակատարութիւնը եղել է միայն ստիժ սառնացնելու ժողովրդի
սիրտը դէպի ուսումնարանը (սա գլխաւորապէս վերաբերում է Ատրպատա-
կանի Ընկերութեան կողմից նշանակուած ուսուցիչ պ. Թոխմախեանցին . . .
եթէ Գեարդաբադի հայ ժողովրդի փոխարէն նոյն հանգամանքներում լինէր
ուրմի ժողովուրդը եւ աւելի ճիշտ ոչ հայ ժողովուրդ, այն ժամանակ դժուար
թէ այդ գիւղի ժողովուրդը ներկայումս մնալ կարողանար իւր կրօնի եւ եկե-
ղեցւոյ գրկում եւ այս բոլորիս, երբ նա այնքան սառնասիրտ է դէպի եկեղեցին
եւ ուսումնարանը, նոյն ժամանակին եւ մոլեռանդ է, արմատացնելով իւրեանց
մէջ բարբարոս գարի քրիստոնէութեան սկզբունքները: Նա չի դնալ եկեղեցի,
բայց երբ մէկը համարձակի համոզել նրան բաժանել եկեղեցւոյ նա կը խորշի
այդ համոզողից: Նա շատ քիչ է մասնակցում իւր կրօնից բայց ամենափոքր
նորամուծութիւնն անգամ նկատում է եւ իսկոյն եւ եթ խորշում. եւ հէնց այդ
առանձնայատկութիւններն են որ նա վարողացել է պահել իւր գոյութիւնը եւ

պաշտպանել իւր գոյութեան ղեկը — կրօնը, այս մոլեռանդ մահմեդականների անկիւնում : Նորա անտարբերութիւնը դէպի վերացականը, որքան մեղ օգտակար են, այնքան եւ փաստակար ապագայում, որովհետեւ տեղերումս կան բազմաթիւ բողոքական եւ կաթոլիկ քարոզիչներ որոնք սպասում են յարմար ժամանակի արմատացնելու ժողովրդի մէջ նոր սերմ եւ նոր դաւանութիւն : Բացի դորանից եւ իւրաքանչիւր դործչի, լինի դա քահանայ եւ թէ ուսուցիչ, անհասկանալի եւ անբացատրելի ըստ իւրեանց հասկացողութեան վարմունքը կարող է լինել գայթակղեցուցիչ եւ միջոց նորա բաժանելուն եկեղեցու գըրկից : Այս ժողովուրդը «պատրաստ է» եւ իւր եկեղեցին համարել «Հերետիկ» եթէ նորատուած բացատրութիւնը մի մտքի, չի համապատասխանում իւրեանց խելքին ու հասկացողութեան :


Այսպիսի եղերական վիճակից դուրս բերելու համար ժողովրդին, հարկաւոր է մի հասկացող եւ գործունեայ անձն, որ կենդանի խօսքերով եւ վայելուչ բարբոյ վարողանայ այդ կմախքը դալար դարձնել եւ ընդունակ լուսաւորութեան :

Այս տխուր երեւոյթը հետեւանք է անլուսաւորութեան, իսկ կայ եւ մի ուրիշ, աւելի վտանգաւոր երեւոյթ, դա ժողովրդի կասկածը եւ անմատչելութիւնը հայ ուսուցչին, դա, ես ինչպէս տեղեկացայ պէտք է համարել ժողովրդի փորձառութեան կողմից : Պ. Թոխմախեանը ուսումնական տարին վերջանալուց յետոյ գանգատում է դաւառապետին եւ ժողովրդի վերայ տուգանք դնում 12 թուման, եթէ այդ բանը անէր մի ուրիշ անձն, ոչինչ. բայց որովհետեւ պ. Թոխմախեանցը «վարժապետ է» (ըստ ժողովրդական հասկացողութեան մարդ եւ վարժապետ տարբեր բաներ են. վարժապետ — դա «ազգային» պիտի լինի եւ Գրիստոսի նման ձրի պիտի ծառայէ, իսկ մարդը իրրեւ մշակ — արժանի է իւր վարձին) այդ պատճառով այժմ «վարժապետ» տեսնելիս փախչում են . . . դա շատ վտանգաւոր երեւոյթ է եւ խոհեմութեամբ պէտք է վերջ տալ դորա տարածման : Այժմ երբ մի ուսուցիչ քաղցրութեամբ է վարում, ասում են «սա էլ նրանից կը լինի հա՛ . . . մեղ քեալաքի մէջ է ուզում ձգել» : Այս երեւոյթը եւ նկարագրում եմ սոյն տեղեկագրի մէջ : որպէսզի մեր ժողովրդի վարքի ու բարքի մակարդակը. մեղ յայտնի լինելով՝ մենք զգուշանանք վատ եւ թերուսում ուսուցիչներ ուղարկելու գիւղերը, նման պարոնները աւելի օգտակար կը լինեն քաղաքում լինելու իրրեւ աշակերտներ, իսկ գիւղերը անպայման պիտի ուղարկուին փորձառու եւ զիտակ ուսուցիչներ եւ որովհետեւ մի մարդու կրթութիւնը իմանում ենք նորա վկայագրից, ուստի պիտի աշխատել որ այդ ուսուցիչները եւս ունենան Ատտեստատներ — վկայագրեր : Իսկ վարձատրութիւնը այստեղ երկրորդական դեր պիտի խաղայ պատուարժան վարչութեան կողմից . . . :

Բ. Ուսումնարան

Անցեալներում ուսումնարան չի եղել գիւղում, այլ միայն «Ազգայիններ» մականուն տակ եղել են պարոններ, որոնք մի կերպ գոմերում, տներում, առանձին բնակարանում, որտեղ որ յարմար են գտել դասաւանդել են ձրի ժամագիրք եւ մասամբ Աւետարան : Նրեք տարի առաջ շինել են նոր եկեղեցուց բակում մի սենեակ, որտեղ եւ սկսել են լինել կողմից ուղարկուած ուսուցիչները պ. պ. Թոխմախեանցը եւ Սարգսեանցը դասաւանդել : Առարկաները եղել են ժամագիրք եւ Մայրենի լեզու, բարձր թողնելով ամենակարեւոր առարկաները : Թուրքանութիւն, աշխարհագրութիւն, (նախագիտելիք), իրազննութիւն, հայրենագիտութիւն, գեղագրութիւն եւ ազգային ու եկեղեցական երգեցողութիւն : Ներկայ տարուայ Օգոստոսից ջանիւք եւ աշխատութեամբ Արժանապատիւ Տ. Տ. Յովհաննէս եւ Մկրտիչ քահանայից հիմք է դրուել կա-

ուսցման նոր ուսումնարանի, որը բաղկացած է երկու սենեակից եւ մի նախասենեակից, բացուած ճակատով դէպ արեւմուտք .-



Ծանօթութիւնք

- 1.- Նախասենեակ = 77 ք. ոտնաչափ տախտակամածի մակերեւոյթով. երկարութիւն m = 7 ոտ. իսկ լայնութիւն 1 = 1 սաժ. 4 ոտն., բարձրութիւնը h = 2 սաժեն, բուխարի (որմնա — վառարան).
- 2.- Աջակողմեան դասարան = երկարութիւն m = 4 սաժեն, լայնութիւն 1 = 1 սաժեն 4 ոտնաչափ.
- 3.- Ձախակողմեան փոքր դասարան = երկարութիւն m = 2 սաժեն 1 ոտնաչափ, լայնութիւն 1 = 1 սաժեն 4 ոտնաչափ : Ամբողջ շինութեան երկարութիւն m = 8 սաժ. 3 ոտն., լայնութիւն 1 = 2 սաժեն 1 ոտնաչափ, բարձրութիւն առաջին կողմից ճակատից h 2 սաժեն, բարձրութիւն յետեւից h = 2 սաժեն 1 ոտնաչափ, կտուրը թէք է եւ յենուած յառաջ.
- 4.- Եկեղեցին իւր սեղանի պատով եւ երկու լուսամուտով.
- 5.- Բակը կամ պարտէզը որը բաժանուած է մի առուակով դրացի պարտէզից.
- 6.- Դրացու պարտէզը բազմաթիւ ծառերով պտղատու եւ սօսի : Հիմքը դրուած է շերտաքարից 1 1/2 ոտնաչափ բարձր տեղի մակերեւոյթից, իսկ մնացածը բարձրութեամբ 12 1/2 ոտնաչափ անթուրծ — հում աղիւսից, ճակատը պաշտպանուած է մի պատշգամբաձեւ վերնածածկով անձրեւից եւ ձիւնից : Առաստաղը ծածկուած է սօսի փայտից. ներսը եւ դուրսը դեռ ծեփած չէ սպիտակ կաւով (գած). իւրաքանչիւր բաժանման մէջ կայ որմնախողովակ, վառարանների համար, դռները դեռ պատրաստ չեն եւ ոչ պատուհանները որոնց մասին արել եմ կարեւոր կարգադրութիւն առաջադրո՞ւնքերին. թերեւս 20ին պատրաստ լինին :

Ուսումնարանը երկու դասարանների համար ունի միայն չորս նստարաններ, առ այժմ կարեւորութիւն է զգացւում հինգի, իսկ ապագայում ըստ հար-

Ըստ ծրագրի կրօնագիտութեան

Դասատետր կրօնի, Սահակեանի Ա. տարի	20 հատոր
Դասատետր կրօնի, Սահակեանի Բ. տարի	5 հատոր
Դասատետր կրօնի, Սահակեանի Գ. տարի	10 հատոր
Դասատետր կրօնի, Սահակեանի հին ուխտ Ա. դասարանի համար	5 հատոր
դումար	40 հատոր

Ըստ ծրագրի թուարանութեան Եւտուշիվսկիյ կամ Պանճուլաղեան Ա. Բ. եւ Գ. տարի 10 հատոր

Ըստ ծրագրի իրազնութիւն I, II եւ III բաժանմանց համար ձեռնարկ Շահվերդեանի 2 հատոր

Ըստ ծրագրի գեղադրութիւն օրինակներ 12 հատոր

Եւս մի «Ուղեցոյց Ուսուցչի» Բաղադրեանի ընդամենը 119 հատոր

1 հատոր

ընդամենը 120 հատոր

Վերոյիշեալ դրքերը ամենակարեւորն են, արդ սոցա պակասութեան պատճառով դասատուութիւնը կանոնաւոր սխտեմատիքական ընթացք դեռ չի ստացել, սպասում եմ անյապաղ ուղարկման:

Ձմեռուայ կէսին թերեւս աշակերտների թիւը շատանայ, որովհետեւ առայժմ ժողովուրդը սպասում է թէ ինչ արդեօք ցոյց կը տամ ես պաշտօնիս ասպարէզում, բարեխաւ հետեւանքը կ'ունենայ եւ շատ նախանձաւորները: Հարկաւորութիւն է զգացում քարետախտակների, եթէ կան կարտօննեայ տախտակները եւ կաւիճ, ինչդեմ ուղարկէք, թուարանական խնդիրներ լուծելու եւ գրաւոր վարժութիւնների համար: Ուսման տենչը ժողովրդի մէջ դարձեցնելու համար յարմարաւոր համարեցի կարգադրել դումարել մի մանկավարժական ժողով Ընկ. ուսուցիչներից դասախօսութիւնները կարդալու կրօնական եւ բարոյական իմաստով թէ եկեղեցում եւ թէ տօն ու կիւրակէ օրերին ուսումնարանում, առաջին մանկավարժական նիստը կայանալու է ամսիս 18-ին, դորա մասին արդէն հրաւիրանք ուղարկել եմ Բարանդուղի մեր պաշտօնակիցներին, յոյս ունեմ որ այդ ազգօգուտ գործը կունենայ իւր հետեւանքը: Ծրագիրը կ'ուղարկեմ ի հաստատութիւն պատուելի Վարչութեանը: Ընդունելութիւնը ես յարմար համարեցի կատարել բոլորին թէ հասակաւոր եւ թէ մանուկների վերաբերմամբ, հասակը կարող է լինել եւ 40 ըստ իմ, այդ հասակի անձինք կը լինին ազատ ունկընդիրներ, որոնց ցուցակը առանձին կը ներկայացնեմ իր ժամանակին: Այսպէս ես կ'ունենամ երկու պարտականութիւն մին ղէպի մանկտին, միւսը չափահասները: Դասատուութիւնը լինում է հայերէն, կրօն, գրութիւն, թուարանութիւն, եկեղեցական եւ ազգային երգեցողութիւն: Աշակերտներին ամեն օր առաւօտ եւ երեկոյ կարգով Եկեղեցի եմ առաջնորդում եւ մասնակցում ժամերգութեանը: Դա շատ գեղեցիկ եւ բարի տպաւորութիւն է թողնում ժողովրդեան խաւի վրայ:

Ներկայ Տեղեկագիրը գրեցի եւ ուղարկում եմ ի տնօրինութիւն պատուարժան Վարչութեան Հայուհեանց Բարեգործական Միացեալ Ընկերութեան ի Թաւրիզ, ի 18 Նոյեմբերի 1901 թուի. ի գիւղն Գեարդարազ-Ուրմիա դաւառիս:

Ուսուցիչ Սարգիս Տէր Մկրտիչեան

Յ. Գ. Կիւրակէ եղայ քաղաք եւ ստացայ պ. Մելքոն Շահբաղեանցի անուամբ ուղարկուած ինձ նամակը շնորհակալութեամբ. — Նոյնը

1901 Դեկտ. 30 Գեարդարազ

Ազնուափայլ տիկին Սրբուհի Ամատունի
Նախագահ Թաւրիզի
Հայուհեանց Բարեգործական Միացեալ Ընկերութեան.
Թաւրիզ:

Ազնուափայլ տիկին, ի նկատի ունենալով ուսումնարանի ներկայ եղբրական վիճակը եւ ամենամեծ կարիքը դասագրքերի մէջ, պատիւ ունեմ ներկայացնել ներկայ դիտութեանս մէջ մանաւանդ տեղեկագիր: Ներկայումս դասաւանդումն բաժանուած է չորս տարեշրջանի.

Ա. տարի — 1.— Դասաշրջան

Անուանք եւ Ազգանունք աշակերտաց քանի տարեկան, տարին ուսման.

1.— Աստուածատրեան Նիկողոս	7 — I
2.— Բարխամեան Գեղամ	9 — I
3.— Դաւթեան Խոսրով Ղարաճօլցի	7 — I
4.— Խաչօեան Գէորգ	7 — I
5.— Տ. Թովմասեան Մելիքսէթ	8 — I
6.— Տ. Պետրոսեան Խոսրով	7 — I
7.— Օջախեան Խոսրով	7 — I

Աշակերտուիք —

1.— Աղիգեան Վարդանոյշ	7 — I
2.— Անտոնեան Հայկանոյշ	7 — I
3.— Խաչատրեան Սօնա	8 — I
4.— Գասպարեան Սօֆիա	7 — I
5.— Եղիազարեան Եւայ	7 — I
6.— Խուրանեան Մարիամ	7 — I
7.— Մետեի Շահբաղեան Շաքար	7 — I
8.— Յարութիւնեան Մարինգիւլ	7 — I
9.— Վարդանեան Մարիամ	7 — I
10.— Վարդանեան Սօնա	7 — I

Առարկաները.— Հ. լեզու, թուարանութիւն եւ դիտողական ուսումն (կրօն-բարոյակրթական)

2.— Նախակրթարան —

1.— Բարխանեան Սահակ	7 — II
2.— Բարայեան Մեսրովպ	8 — II
3.— Գրիգորեան Աղաջան	8 — II
4.— Դաւթեան Ենովք	7 — I
5.— Եղգարեան Ոսկան	7 — II
6.— Մուրադխանեան Սեդրակ	9 — II
7.— Յովհաննիսեան Եփրեմ	7 — II
8.— Տ. Պետրոսեան Մեսրովպ	9 — II
9.— Օջախեան Վարդան	12 — II
10.— Օջախեան Գէորգ	12 — II

այդ համարձակութիւնը պէտք է վերագրել յիշեալ արժանապատիւ քահանայից ազգասիրութեանը, իսկ մեր կողմից եւ կարծում եմ, անյապաղ պիտի լինի համակրանք, որը կերելի առատ վարձատրութեան մէջ. նրանք այս բոլոր պէտքերը եւս կողմից են. եթէ մեր կողմից եւս լինի յորդոր եւ վարձատրութիւն, այն ժամանակ նրանց հոգեկան էնտուզիազմը՝ եռանդը կը բորբոքուի աւելի եւ նրանք կը սկսին գործել աւելի մեծ աշխոյժով: Ներկայումս նրանց վրայ գործ դրած իւրաքանչիւր շահին կամ կողմից ապագայում մեծ պտուղներ կը տայ: Գրաւել ժողովրդի սէրը դէպի ուսումնարանը, այն աստիճան՝ որ նա համաձայնի նրա կառուցման ծախքը վճարել: Դա մեծ բան է այս մոռացուած անկիւնում, ուր հոգեկան անբարեաց եւ գործնական ընկերայ է տիրում:

Եթէ բարեհաճի պատուարժան վարչութիւնը ուղարկութիւն դարձնել այս փոքրիկ առաջարկութեանս վերայ եւ դրանոր շնորհակալութիւն ու նիւնական վարձատրութիւն յատկացնելով յիշեալ նորընծաներին, դրաւել նըրանց սիրտը, այն ժամանակ եւ հաստատ դիտեմ որ ուսումնարանը կը կարօտի ձեր օգնութեանը միայն միաւոր տարիները. իսկ վերջը ոյժ եւ ցանկութիւն կունենայ իւր սեփական միջոցներով ուսուցիչ հրաւիրելու եւ կառավարելու:

Ներկայ նիւթական օգնութիւնը յիշեալ անձանց, այժմ մեծ եւ աւելի մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ ժողովուրդը կառավարում է կալուածական իրաւունքներով, այսինքն, սեփական հող չունի եւ մշակում է կալուածատիրոջ հողը կէս մասով. իսկ յիշեալ անձինք լինելով քահանայ չեն կարողանում մշակել, միջոց չունենալով, իսկ եկամուտ ժողովրդից, քահանայագործութեան առաջին տարին լինելով, շատ նուազ է, մանաւանդ այժմ տ.՝ տ.՝ ներսէս եւ Կարապետ բանադրուած քահանաները առանց հոգեւոր իշխանութեան հրամանի սկսել են քահանայագործել եւ եղած նուազ եկամուտն էլ նրանք են յափշտակում խեղճ նորընծաների ձեռքից իսկ վերջիններս լուրիկ համբերում են այդ բոլորին խուսափելով երկապառակութեան յաղեցնելուց, թէ մի գուցէ դորանով խուսափելու ընկնի ժողովրդի մէջ եւ նրանց ազնիւ գործունէութեան պերսպեկտիւան քայքայուի:

Ներկայացնելով ի տնօրինութեան պատուարժան վարչութեանը, ներկայ տեղեկագիրը խոնարհաբար խնդրում եմ ուղարկութիւն դարձնել եւ չը զլանալ եւս անյապաղ ուղարկելու վերոյիշեալ գրքերը. որ կարողանամ ժամանակին ազնիւ սրտով գոչել «ես կատարեցի իմ վրայ ծանրացած պարտականութիւնը» — Գլօբուսի կարեւորութիւնը ամենամեծն է:

Ընդունեցէք խորին յարգանացս հաւաստիքը — Սարգիս Տ. Մկրտիչեան:

Ուսուցիչ Թաւրիզի Հայուհեանց Բարեգործական Միացեալ Ընկերութեան Գեարդարարի ուսումնարանի — 1901-1902 տարեշրջանի:

1901-XII-30

Գեարդարար

Յ. Գ. Յանկանալով աւանդել Ռուսաց լեզու բարձր դասարանի աշակերտներին խոնարհաբար խնդրում եմ ուղարկէք 20 Ազգուկա Ա. տարի: Աղաչում եմ անպատճառ ուղարկէք բոլոր դասագրքերը մանաւանդ 20 Մայրենի լեզուն, 1 Գլօբուսը, 12 քերականութեան Ա. տարին եւ 5 երկ. 20 Ազգուկան:

Նոյնը

3
ԹԱԻՐԻՉԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՈՒՐՄԻՈՅ ՎԱՐԺԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
1902—1903

Ուսանողք (Դ. տարի) —

Թիւ ուսանողաց (երկսեռ), անուանք եւ ազգանունք, վարք, աշխատութիւն, հայ լեզու, թուարանութիւն, կրօն դիտութիւն, աշխարհագրութիւն, դիր, բացակայութիւն ամբողջ տարեշրջանում, հասակ կամ տարիք.

1.— Սամուէլ Մխիթարեան	3	4	3	3	5	4	4	1	13
2.— Արտաշէս Նազարբէկեան	4	4	3	3	4	4	3	1	12
3.— Վահրամ Աւագեան	5	4	5	4	5	5	5	1	12
4.— Սամսոն Շահբուղդեան	5	5	4	3	5	5	4	1	11
5.— Խոսրով Աբրահամեան	5	5	5	5	5	5	4	1	13
6.— Մանուէլ Ստեփանեան	3	4	4	5	5	5	4	1	13

(Բ. տարի)

7.— Ամիրխան Սահակեան	3	3	4	5	4	—	5	3	13
8.— Երուանդ Յովհաննիսեան	4	3	3	4	4	—	3	3	11
9.— Յովհաննէս Գէորգեան	3	3	3	3	4	—	3	16	11
10.— Ուսանա Յովհաննիսեան	4	5	4	5	5	—	4	4	10

(Ա. տարի)

11.— Նուարդ Շաղոյեան	5	5	4	1	3	—	2	6	8
12.— Թադուհի Մխիթարեան	3	3	3	3	4	—	4	2	9
13.— Եաղութ Նիկոլեան	3	4	3	3	4	—	4	6	9
14.— Աննա Գէորգեան	4	4	4	4	5	—	3	5	9
15.— Երանուհի Աւագեան	4	4	5	5	5	—	2	1	8
16.— Սիրանոյշ Ստեփանեան	4	4	2	1	4	—	3	10	7
17.— Վարդուհի Յովհաննէսեան	4	3	1	1	2	—	1	2	6
18.— Լեւոն Օջաղեան	5	5	5	5	4	—	3	1	7
19.— Նարիման Յովհաննիսեան	4	1	1	1	3	—	2	1	9
20.— Մկրտիչ Գրիգորեան	3	2	3	3	3	—	2	1	9
21.— Արտաշէս Վարդանեան	4	2	4	3	4	—	3	1	8
22.— Սիմոն Յակոբեան	3	3	3	4	4	—	2	1	8
23.— Սմբատ Յովհաննիսեան	4	4	5	5	5	—	3	2	8
24.— Արմէն Նազարբէկեան	4	3	4	4	4	—	2	1	7
25.— Գրիգոր Սարգսեան	3	2	1	2	3	—	2	4	7
26.— Գրիգոր Օջաղեան									

Նորեկ

Ծանօթ.— Ներկայ շրջանում ուսումնարանս ինձ յանձնուեցաւ 18 ուսանողներով. որոց թիւը բարձրացան մինչեւ 25. եղան թէեւ մի քանի փափազողներ իրանց որդիքն ուսումնարանս ուղարկելու. մանաւանդ վերջին ամիսներում, բայց այդ տղոց ստարիքն 7-ից պակաս լինելուն չկարողացայ ընդունել: Ինչպէս երեւում է անուններէ ցուցակից, ուսանողք բաժնուած են 3 կարգերի, Ա. Բ. եւ Գ. դասընթացներով:

Գ. եւ Բ. դասընթացներում դասնուղ ուսանողը յառաջիկայ շրջանում կը փոխեն իրենց դասընթացը, իսկ Ա. տարւայ ուսանողը կը փոխեն մեծ մասամբ նրանցից մի քանիսը դարձեալ կը մնան միեւնոյն դասընթացում. (կրկնելու նախորդ դասընթացը) :

Ինչպէս Ընկերութեան բոլոր ուսումնարանք, նոյնպէս եւ մերը չունենալով ուսման, կամ դասաւանդման մի ընդհանուր ծրագիր. դասերն աւանդուեցան ըստ համոզման կամ փորձառութեան ուսուցիչներին :

Դիտողութիւն. — Յառաջիկայ շրջանում պէտք է դասաւանդման առարկաների վրայ աւելցնել Հայոց Պատմ. եւ Մարմնամարզութիւն : Շատ հաւանաւոր է, որ Ուրմիոյ ուսուցիչն ունենայ մի օգնական : Վասնզի ընկերութեան բոլոր վարժարանց մէջ սա միակն է, որ տարւայ սկզբից ց'վերջ աշակերտներին պահում է ամբողջ. այնինչ զիւղական վարժարանաց ուսանողք Չատիկից սկսեալ պահասում են. եւ այսօր Մայիսի սկիզբներին եւ մինչեւ իսկ աւելի կանուխ մէն մի զիւղական ուսումնարանում դասնում են 2—10 ուսանողք :

Պատարժան Ընկերութեան ուշադրութեան առարկայ ընել կարժէ այս անժամանակ հրատարակները, որոնց պատճառը մէկից աւելի է :

Ընկերութեան նորագոյն ծախք չ'լինել, եթէ տ. Կարապետ քահանան փոխանակ անօգուտ տեղը թումաթարում պահելու, Ուրմի բերուի, թէ իբր քահանայապետը եւ թէ իբր օգնական ուսուցիչ. որու ոտճկի կէսը քահանայական եկամուտներից զոյանալով, Ընկերութիւնը պարտաւոր կը լինի միայն կէս ռոֆիկ վճարել նրան. եւ այս կերպով Ընկերութիւնը կ'ունենայ կրկին օգուտ, թէ նիւթական եւ թէ բարոյական :

Վարժարանք կանոնաւոր վիճակի մէջ դրուելու համար պէտք ունեն միակերպ մի ընդհանուր ծրագրի եւ կանոնագրի, որք կարող են պատրաստուել. քննուել եւ հաստատուել ընդհանուր ուսուցիչներին կողմից, կազմելով մի ուսուցչական ժողով արձակուրդի ժամանակամիջոցում :

5 Մայիս 1903
Ուրմի

Ուսուցիչ Ուրմիոյ Ուսումնարանին
Մ. Պապիկեան

4

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆԵՐԿԱՅ ԿԻՍԱՄԵԱՅ ՈՒՍՈՒՄԱՆ
ԹԱԻՐԻՉԻ ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻՍՅԵԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲԱՐԱՌՈՒ ԳԻՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՏՂԱՅՈՅ
1901—1902 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ

Ուսումնարանը սկսել է Սեպ. 10ին եւ ունենք 28 ուսանողներ եւ կազմում են չորս բաժանմունք :

Գ. բաժանմունք

Հայոց Լեզու. — Բ. Տ. Մայրենի Լեզուի երրորդ շրջանից սկսած մինչեւ հինգերորդ շրջանը :

Կարգում են առգանութեամբ եւ պատմում, կարգացածները թուրքերէնի թարգմանել : Ոտանաւորները բերանացի ասել, արձակ պատմել եւ թարգմանել :

Քերականութեան սկզբունքներից՝ որպիսութեան թիւը, դործողութեան թիւը, բառ, վանկ, առարկայի սեռը՝ արական եւ իգական, յատուկ եւ հասարակ անունները, եղակի եւ յողնակի (եր եւ ներ) մասնիկները, կարճ նախադասութեան վերլուծումը :

Թուարանութիւն. — 1—2.000.000 գրեւ եւ կարգաւ, 1—1000 չորս դործողութիւն :

Ազգային պատմութիւն. — Հայկ եւ Արամը ընդարձակ, Արա Գեղեցիկը եւ Պարոյր առաջին թագադիր թագաւորը :

Կրօն. — Աւետումը, Քրիստոսի ծնունդը, Մոգերի գալը, փախուստը, Յիսուսի Տաճար տարուիլը, Տասներկու տարեկան Յիսուսը Տաճարում, Յիսուսի Միբաութիւնը, Յիսուսը օրհնում է բարի մանուկները :

Իրագնութիւն. — Ծանօթ բոյսեր եւ կենդանիք, շինութիւններ, բնական զիտութիւնից՝ ամպ, որոտում, կայծակ, անձրեւ, ձիւն, աղբիւր, առու, դետ, ծով, սար, ձոր, հովիտ, բլուր, դաշտ, անտառ, եւ երկրի չորս գլխաւոր կողմերը :

Գիր. — Արտագրութիւն, թելագրութիւն, գեղագրութիւն, գրեւ մի տողի մէջ :

Երգ. — Մանկական, ազգային եւ եկեղեցական :

Գ. բաժանմունք

Հայոց Լեզու. — Ա. տարի Մայրենի Լեզուից ծաղկաքաղ, պարզ կարգաւ եւ մանկական բովանդակութիւն ունեցող հատուածները պատմել եւ թուրքերէնի թարգմանել : Մանկական ոտանաւորները բերանացի ասել եւ թարգմանել :

Քերականական վարժութիւններ՝ առարկայ, շնչաւոր եւ անշունչ, մտաւոր եւ նիւթական առարկաներ, առարկայի թիւը, — մէկից աւելի — շատ եւ քիչ, վանկ, ձայնաւոր եւ բաղաձայն գրեր :

Բարոյակրթութիւն. — Այսինքն հէքիաթները, որք բովանդակում են կրօնական — բարոյակրթական գաղափարներ եւ զիտողական ուսման նիւթ մատակարարող :

Թուարանութիւն. — 1—900 գրեւ եւ կարգաւ, 1—50 չորս դործողութիւն :

Գիր. — Գրի տարբեր՝ հորիզոնական եւ թեք գծեր, արտագրութիւն, թելագրութիւն գասից, գեղագրութիւն, գրեւ չորս տողերի մէջ :

Երգ. — Մանկական, եկեղեցական եւ ազգային :

Գ. բաժանմունք

Հայոց Լեզու. — Ա. տարի Մայրենի Լեզու Ա. շրջան, կարգաւ եւ գրել գրատախտակի եւ չորս տողերի մէջ :

Վանկ, ձայնաւոր եւ բաղաձայն գրել :

Գիր. — Գրի տարբեր՝ հորիզոնական եւ թեք գծեր, գրել գասից :

Թուարանութիւն. — 1—50 համրել համրիչի վրայ. 1—10 չորս դործողութիւն համրիչի վրայ. 1—10 գրել գրատախտակի վրայ :

Բարոյակրթութիւն. — Մանրիկ հէքիաթներ եւ ոտանաւորներ :

Երգ. — Մանկական երգեր :

Ա. բաժանմունք

Ունկնդիրներ են, գրում են հորիզոնական եւ թեք դժեր, ասում են փոքրիկ երգեր եւ մանկական ոտանաւորներ:

1—10 համրում են համրիչի վրայ:

28 Դեկ. 1901 թիւ

Բարանդուզ

Բարառու գիւղ

Ուրմի

Յովհաննէս Վարդանեան

5

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԻՍԱՄԵԱՅ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԹԱԻՐԻՋԻ ՀԱՅՈՒՆՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԲԱԲԱՍՈՒ ԳԻՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՕՐԻՈՐԳԱՅ
1901—1902 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ

Ուսումնարան սկսած են յաճախել Հոկտեմբերին, մինչեւ հիմա 18 աշակերտուհի ունինք եւ բաժանում են երկու կարգի:

Բ. կարգը

Հայոց Լեզու. — Ա. տարի Մայրենի Լեզու, ա. մասը վերջանում է, կարգալ եւ գրել. վանկերի բաժանել, ձայնաւոր եւ բաղաձայն գրեր, առարկայ. շնչաւոր եւ անշունչ առարկաներ:

Թուաբանութիւն. — 1—100 համարել համրիչի վրայ, 1—50 գրել գրատախտակի վրայ. 1—10 չորս գործողութիւն:

Գիր. — Գրի տարրեր հորիզոնական եւ թեք դժեր, գրել գրատախտակի եւ տետրակի վրայ, գեղազրութիւն չորս տողերի մէջ:

Կրօն. — Տէրունական աղօթք եւ մանրիկ աղօթքներ:

Ա. կարգը

Հայոց Լեզու. — Ա. տարի Մայրենի Լեզու Ա. մասը կարգալ եւ գրել գրատախտակի եւ տետրակի վրայ, վանկերի բաժանել, ձայնաւոր եւ բաղաձայն գրեր:

Թուաբանութիւն. — 1—50 համրել համրիչի վրայ, 1—10 չորս գործողութիւն համրիչի վրայ:

Գիր. — Գրի տարրեր հորիզոնական եւ թեք դժեր:

Կրօն. — Տէրունական աղօթք:

Երգ. — Մանկական երգեր:

Ձեռագործ. — Գործում են հաշիւայ, գուլպայ, շալ, գլխարկ, փափուլ, եւ կորտիկ: Կար, ասեղնագործ, կանվայ, կար եւ ձեւ:

Մանօթութիւն. — Արդէն մի քանի անգամ յայտնել ենք Յարգելի Վարչութեանը, թէ աղջիկները ընթերցանութիւնը այնքան չեն ախորժում, զուցէ իրանց ընտանեկան խախտւած վիճակիցն է. բայց ձեռագործ շատ են սիրում:

Այս տարի մեծերից մի քանիսը չեն գալիս:

Մարիամ Վարդանեանց

28 Դեկ. 1901 թիւ

Բարանդուզ-Բարբառու գիւղ:

6

28 Դեկտ. 1901 թիւ

Ուրմի Բարանդուզ
Բարառուզ

Մեծապատիւ

Պարոն Տիգրան Աֆրիկեան

Ազնիւ Տէր,

Անկեալ ժողովրդին օգնելը եւ կրթական գործը յառաջ տանելը՝ բարի եւ ամուր բնաւորութեան տէր մարդկանց գործն է, իսկ դուք արդէն համապատասխանում էք այդ զգացման:

Մի բուն Հայ-ժողովրդի, ինչպիսին է Բարանդուզում եղած մեր ազգայինները, խոր աղիտութեան մէջ թողուած վիճակը գրաւեց Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ուշադրութիւնը, որոնք այսօր շնորհիւ Ձեր առատաձեռնութեան, բացել են ուսումնարաններ, որտեղ մանկախն ձեռք բերելով իւր մոռացած մայրենի լեզուն, պիտի միանայ ազգութեան վսեմ դասփարին հետ, որից դժբաղդարար այնքան խորթացել է Բարանդուզի հայը:

Արդարեւ դուք լաւ ըմբռնած էք, թէ ինչն է մի ազգի վերականգնիչը, ինչ բանն է նորան տնտեսապէս, բարոյապէս եւ Ֆիզիքապէս օժտողը, եթէ ոչ ուսումնարանը: Ուրեմն դուք կոչուած էք փրկելու այդ տարրին, որը կորստեան անդնդի մօտ էր գտնուած:

Մեծ են Ձեր գործերը եւ յոյժ գնահատելի: Նոր սերունդը ոսկէ տառերով պիտի արձանագրէ Ձեր անունը իւր սրտի մէջ եւ պատմութիւնը փառաւոր էջեր պիտի բանայ Ձեզ համար:

Ձեր Բարանդուզի ուսումնարանները ոչ թէ միայն կրթական գործն է յառաջ տանում, այլ ջան ի գործ է դնում հային ճանաչեցնել տալ իրա ազգը եւ ներշնչել այն պարտաւորութիւնները որ կունենայ ամեն անհատ զէպի իւր Եկեղեցին:

Կեցցէ՛ք դուք, կեցցէ՛ք մինչեւ յաւիտեան:

Ընդունեցէ՛ք, խնդրում ենք, Ձեր սաների եւ սանուհիների մտքի արգասիքները, որ նորտարուայ առթիւ մատուցանում են Ձեզ ուղերձներ եւ երկու ձեռագործ, որք արդիւնքն են երկու ու կէս տարուայ աշխատութեան:

Ընդունեցէ՛ք, խնդրում ենք, եւ մեր շնորհաւորութիւնն ու բարեմաղթութիւնը նոր Տարուայ առթիւ:

Խորին յարգանք

Ամուսիններ } Մարիամ Վարդանեանց
 } Յովհաննէս Վարդանեանց

Ուսուցչուհի եւ ուսուցիչ Թաւրիզի
Հայ. Բարեգործ. Միացեալ
Ընկերութեան Բարառու գիւղի
ուսումնարանի

7

Մեծապատիւ

Պարոն Տիգրան Աֆրիկեան

Ազնիւ Բարերար

Մեր գիւղը մինչեւ հիմայ ուսումնարան չը կար, մենք դնում էինք դաշտ, տաւար պահում էինք, պարապ ման էինք դալիս, մեր լեզուն մօռացել էինք, թուրքերէն խօսում էինք, մինչեւ անգում խաչակնքել՝ չէինք իմանում, եւ շատ ցանկանում էինք, որ մենք էլ ուրիշների նման ուսումնարան ունենայինք, կարդայինք, գրէինք մեր լեզուն խօսէինք, ա՛խ, ինչքան նախանձում էինք, մեր դրացիներին, որ ուսումնարան ունէին, մենք մնում էինք խեղճ, առանց ուսումի:

Փառք Աստուծոյ, հիմայ ունինք, մեր ձայնը շուտ լսեց թաւրիղի Հայուհեանց Բարեգործական Ընկերութիւնը, փոքրիկներէս համար ուսումնարան բացեց եւ բարերարը դու ես:

Մենք դնում ենք Վարժատուն, սովորում ենք մեր Մայրենի Լեզուն, կարդում ենք, գրում ենք, երգում ենք եւ լաւ սղայ ենք:

Շնորհակալ ենք քեզանից, սիրելի հայր, շատ ու շատ շնորհակալ ենք նրա համար, որ դու մեզ միտք բերիր, չը թողիր որ մեր լեզուն կորէր: Մեր ազգը փրկիր չարերի ձեռքից, օգնեցիր: Մենք քո արած լաւութիւնը չէինք մօռանալ, քո բարի անունը միշտ յիշում ենք, մեր փոքրիկ սրտերի մէջ պահում ենք, մենք քո զաւակներդ ենք:

Շնորհաւորում ենք քո Նոր տարին, եւ ցանկանում ենք քեզ համար, որ դու բազմաւոր լինիս եւ շատ բարի տարիներ տեսնես:

1901 Դեկտեմբեր 28-ին
Բարանդուզ-Բարարու գիւղ

Թաւրիղի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութեան ուսումնարանի աշակերտներ՝

- Յարութիւն Թարվերտիեան
- Հայկ Վարդանեան
- Յարութիւն Ստեփանեան
- Ամբաս Սարգսեան
- Մատթէոս Բարսեան
- Պօղոս Գրիգորեան
- Մինաս Ղուրբանեան
- Սարգիս Յարութիւնեան
- Յովսէփ Ալէսանեան
- Ներսէս Ազիզեան
- Պաշատուր Բարայեան
- Գաբրիէլ
- Պաշատուր

8

Մեծապատիւ

Պարոն Տիգրան Աֆրիկեան

Անուշիկ հայր՝

Բարառու գիւղը մինչեւ այսօր աղջիկներին ուսումնարան չը կար, մենք պարապ ման էինք դալիս, մեր լեզուն մօռացել էինք, թուրքերէն խօսում էինք, կար ու ձեւ չէինք իմանում, բայց հիմայ ուսումնարան ունինք, թաւրիղի ազնիւ Տիգրիները՝ բացել են եւ բարերարը դու ես:

Մենք հիմա դնում ենք ուսումնարան, սովորում ենք մեր լեզուն, մեր կրօնը, կարդում ենք, գրում ենք, լաւ ձեռագործ սովորում ենք, կարում ենք, ձեւում ենք, որ առաջ ոչինչ չէինք իմանում:

Շնորհակալ ենք քեզանից, հայր, որ մեզ պէս խեղճ եւ անտէր աղջիկներին մտիկ եւ տալիս, դու մեզ համար բարի հայր ես, քո արած լաւութիւնը մենք չենք մօռանալ եւ միշտ աղօթում ենք Աստծուն, որ քեզ սաղ պահի եւ երկար կիանք տայ եւ դու էլ, մեզ չմօռանաս, միշտ միտք բերես:

Շնորհաւորում ենք քո Նոր տարին եւ խնդրում ենք Աստծուց, որ քեզ երկար կիանք տայ եւ բարի տարիներ:

Մեր ձեռագործներից երկու հատ նուէր ուղարկում ենք քեզ եւ խնդրում ենք որ ընդունես:

1901 Դեկտեմբեր 28-ին
Բարառու գիւղ

Թաւրիղի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութեան Բարառու գիւղի ուսումնարանի աշակերտուհիներ՝

- Ասմար Գրիգորեան
- Ընսաւ Յակոբեան
- Պոռոմ Յսայեան
- Գեօղալ Յօնանեան
- Աննա Բինեամինեան

Առաջնորդ
Վիճակին Հայոց Ատրպատականի
No. 120
Դ 28 Սեպտեմբերի 1886 ամի
Ի Գալրէժ

Գերաստիճան Փարվիզ Պանայ Ա. Էնիկոլոփեանց, Մեծապատիւ պարոնէից Մելքոնայ Պալափեանց, Երեսփոխան Հալայի Մետ. Յակովբեանց եւ Մետ. Բաղդասարայ Ղազարեանց:

Մարաղայի Հայոց ժողովրդականաց համահաճ յօժարութեամբն ընտրուելով Դուք Մեծապատիւ Պարոնայք, հողարարձու եւ միանգամայն խնամատար նորոգ բացելի տեղւոյդ ազգային դպրոցի, մեծաւ հաճութեամբ կհաստատեմ զքեզ ՚ի հողարարձական պաշտաման, եւ միանգամայն վստահ ու աներկմիտ լինելով, դուք ազգասիրական ջերմեռանդութեամբ եւ ջանացողութեամբ եւ մարդասիրական կարեկցութեամբ կաշխատէք յօգուտ դպրոցի եւ յառաջա-

դիմութիւն մանկանց սիրելի ազգին մերոց 'ի պիտանի եւ յօգտակար դիտութիւնս եւ աջակցութեամբ ուսուցիչ պրն. Յ. Օրբէլեանցին՝ ուսման եւ կրթութեան գործն համերաշխութեամբ կհասուցանէք իւր Սուրբ եւ Բարձր նպատակին :

Տէր Յովսէփ քհնյ. օրհնելով օրհնեցէ զՁեզ եւ ամենայն բարենպատակ ձեռնարկութեանց Ձերոց տացէ կատարեալ յաջողութիւն 'ի փառս ազգի եւ եկեղեցւոյ մերոց եւ 'ի պարծանս բարեհամբաւ անուանց Ձերոց :

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան

Առաջնորդ Վիճակին
Հայոց Ատրպատականի
No. 183
'ի 1 Նոյեմբերի 1886 ամի
Դավրէժ

Մեծապատիւ հոգաբարձութեանն դպրոցին Հայոց Մարաղայի :

Արքայ ուսուցիչ, պրն. Յովհաննէս Օրբէլեանցի միջոցաւ ուղարկեցի առ հոգաբարձութեանդ 'ի գործադրութիւն երկու ժապաւինեալ մատեններն, զորս հարկէ յանձնել Ձեր անդամակից պրն. Մելքոն Խալափեանցին իրրեւ դանձապահի դպրոցին, որոց միոյն մէջ արձանագրել ազգասէր բարերարների եւ այցելուների թէ պայմանական եւ թէ կամաւոր նուէրներն, իսկ միւսոյ մէջ՝ դպրոցի տարեւորական եւ եւ մտից հաշիւներն :

Նմանապէս համաձայն գրաւոր խնդրանաց եւ յանձնարարութեանց Մեծապատիւ հոգաբարձութեանդ որոշեցի 'ի վարձ ուսուցչութեան պրն. Օրբէլեանցի 'ի տարին հարիւրքսան քուման, որից եւ ստանալով առանձնակի պայմանագիր՝ գրութեանս մէջ ներկայեալ՝ ահա առ Ձեզ ուղարկեցի :

«Թեմակալ Առաջնորդ Հայոց Ատրպատականի»
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեանց

ՏԵՍԻԼՆԵՐԸ 5-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Տեսիլ» բառի մեզ հետաքրքրող նշանակութիւնը Հայկազեան բառարանում բացատրուած է իրրեւ, «յայտնութիւն, երեւումն իրաց առ յԱստուծոյ, ցուցակութիւն, երազ ճշմարիտ, անուրջք ի քուն եւ երեւոյթ առ աչօք»¹ :

Տեսիլները ծագումն ու ձեւաւորումը կապուած է անտիկ դարաշրջանի հետ. դեռեւս յունական դիցաբանութեան մէջ առկայ են տեսիլների ստղմեր՝ կապուած կենդանի մարդկան՝ Հադէսի թագաւորութիւն այցելելու նկարագրութիւնների հետ : Յատկապէս շեշտում ենք այցելուների կենդանի լինելը, ի տարբերութիւն միջնադարեան տեսիլի մի տեսակի՝ «հանդերձեալ աշխարհի տեսիլի», որի համար գրեթէ անխուսափելի էր այդ աշխարհն այցելողի մահը եւ ապա յարութիւնն ի մեռելոց² :

Վաղ քրիստոնէութիւնը, ժառանգելով տեսիլն իրրեւ գաղափարական գէնք, որի միջոցով պէտք է «տիրէր մարդկան սրտերին ու երեւակայութեանը» (Հեղեղ), այն լայնօրէն օգտագործում է իր հայեացքների արծարծման ուրրտում՝ ծառայեցնելով դէրանք իր հիմքերն ամրապնդելու եւ դաւանարանական այլեւայլ խնդիրներ ներկայացնելու նպատակով : Այդ է ապացուցում ծանօթութիւնը Աստուածաշնչի Հին եւ Նոր կտակարանների հետ, որոնցում տեսիլներն ամենալայն կիրառութիւնն են ստացել :

Ինչ վերաբերում է «տեսիլի» որպէս գրական ինքնայատուկ տեսակի, անուանուման, ապա այն, միջնադարեան գրական այլ տեսակների՝ վարք, վկայաբանութիւն, ուղեգրութիւն, հրաշապատում եւ այլն, նման, համաձայն միջնադարեան գրական ընդունուած էտիկետի, ճշգրէն համընկնում է պատումի բուն առարկայի բովանդակութեան³ :

¹ Տէս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, էջ 868, Երևան, 1981 :

² Գուրբելի Ա. Յա., Միջնադարեան ժողովրդական մշակոյթի պրոբլեմներ, Մոսկուա, 1981, էջ 184 (ուսերէն) :

³ Լիխաչով Դ. Ս., Հին ուսական գրականութեան պոէտիկան, Մոսկուա, 1979, էջ 58 (ուսերէն) :

Տեսիլները բուն գաղափար են ապրում յատկապէս միջին դարերում՝ թէ՛ հայ, թէ՛ ռուս, թէ՛ լատինալեզու գրականութիւններում : Միջնադարեան լատինական գրականութեան մէջ տեսիլի առաջին նշումները հանդիպում են 6-րդ դարում՝ Գրիգոր Մեծի «Տրամախոսութիւնք» երկում, իսկ 9-րդ դարից սկսած տեսիլներն անջատուած են կամ դուրս են գալիս աստուածաբանաւորական տրակտատներից, վարքերից ու ժամական տրակտատներից եւ առանձնանում իր նակագրութիւններից եւ առանձնանում իրրեւ ինքնուրոյն ստեղծագործութիւններ, հետագայում միաւորուելով ժողովածուների մէջ⁴ : Հետաքրքիր է նաեւ, որ այդ նոյն 9-րդ դարում արդէն լատինական գրականութեան մէջ տեսիլը չափածոյի է վերածուած եւ 14-րդ դարակազմի իր բարձրագոյն արտահայտութիւնն է ստանում Դանթէի «Աստուածային կատակերգութեան» մէջ⁵ :

Հայ մատենագրութեան սկզբնաւորումից ի վեր տեսիլները լայն տարածում են գտել տարբեր ստեղծագործութիւններում՝ պատմագրական երկերում, սրբախօսական գրականութեան՝ վարքերի ու վկայաբանութիւնների մէջ, քարոզչերում, պարականոն յուշարձաններում եւ այլուր : Ինչո՞վ բացատրել տեսիլների նմանօրինակ լայն տարածումը : Դրա հիմնական նախադրեալները երկուսն են՝ միջնադարեան աշխարհայեացքի իւրաքանչեւ իրապատկութիւններով եւ տեսիլների գործնական նպատակադրումը, որոնց կանգնադրաւորանք քիչ յետոյ :

Չնայած տեսիլների այսպիսի լայն ընդգրկմանը եւ նրանց պարունակած բաւական հարուստ նիւթին, դրանք առ այսօր մեզանում յատուկ ուսումնասիրութեան չեն ենթարկուել : Տեսիլներին անդրադարձել են կամ դիպուածաբար՝ կապուած այլեւայլ նիւթերի ու պրոբլեմների ուսումնասիրութեան հետ, կամ էլ բանասիրական քննութեան են ենթարկուել առանձին տեսիլներ : Այսպէս, յիշատակելի են դեռեւս 1897 թ.

⁴ Տէս Միջնադարեան լատինական գրականութեան յուշարձաններ, IV—IX դդ., Մոսկուա, 1970, էջ 221 (ուսերէն) :

⁵ Նոյն տեղը, էջ 332 :